ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն՝ Դասավար

Թեմա՝ Մայրենիի դասագրքի որևէ թեմատիկ խմբի ամփոփման դասի բովանդակության ներկայացում

Կատարող՝ Թամրազյան Նարինե Դմիտրիի
Ազգանուն, անուն, հայրանուն

Ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գյուլամիրյան Ջուլիետա
Ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում

ԵՐԵՎԱՆ 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հեքիաթներն անդունդներ են՝ խորը, անծայր, անվերջ… Հեքիաթը հարուստ ու շքեղ աշխարհ է: Հեքիաթը ամենաբարձր ստեղծագործությունն է, նույնիսկ հանճարները հեքիաթ չեն կարողանում ստեղծել, բայց հեքիաթների են ձգտում»: (Հովհաննես Թումանյան)

Հեքիաթներ սիրում են բոլորը՝ թե՛ մեծերը, թե՛ փոքրերը: Հսկայական է հեքիաթի դերն ու նշանակությունը մարդու կյանքում: Հեքիաթները ստեղծվել են շատ վաղուց, ժողովրդի կողմից: Այն որպես բանավոր զրույց փոխանցվել է սերնդից սերունդ և եկել հասել մինչև մեր օրերը: Հեքիաթների ստեղծման պատճառ են հանդիսացել մարդկանց երազանքները, իղձերը, դժվար ապրելակերպը, ձգտումը առավել լավ, բարվոք կյանքի: Վաղ ժամանակներից մարդիկ երազել են կառավարել բնության ուժերը, ըմբռնել աշխարհում տեղի ունեցող ամեն ինչ, երազել են ազատ աշխատանքի, արդարության և երջանկության մասին: Բոլոր երկրներում մարդկանց երազանքները նման են եղել, բայց ամեն մի ժողովուրդ դրանք արտահայտել է յուրովի: Ժողովրդական այդ երազանքներից ու ակնկալիքներից էլ ծնունդ է առել հեքիաթների զարմանահրաշ աշխարհը, որն ապրում և գոյատևում է իր հատուկ օրենքներով:

Թեման շատ արդիական է, որովհետև տարիներ հետո էլ դրանք հետաքրքրում են փոքրերին և պատանիներին սովորեցնելով սիրել հայրենիքը, մայրենի լեզուն, հարգանք աշխատանքի և աշխատավոր մարդկանց հանդեպ: Հեքիաթն այն հզոր միջոցն է, որը կապ է ապահովում տարբեր ժամանակահատվածներում ապրած մարդկանց միջև: Այսօր էլ շարունակում են ստեղծվել ու հուզել ընթերցողներին իրենց անմիջականությամբ, պարզությամբ ու խոր լավատեսությամբ:

Հեքիաթը մանկությունը հարստացնող հրաշք է, այն մանկան մեջ մշակում է գեղեցիկ զգացողություն, ճաշակ, հետաքրքրությունների ուղղվածություն, մասնագիտական կողմնորոշում, հղկում է բնավորությունը, հարստացնում նրա գիտելիքները, սերմանում շիտակություն, ազնվություն, հայրենասիրություն: Այն այցելումէ մանկության ամենավաղ շրջանում և իր իմաստուն խորհուրդներով ու կենսունակությամբ ուղեկցում ամբողջ կյանքի ընթացքում:

Հեքիաթը գեղեցիկ հյուսվածք է, գունագեղությամբ ու գեղարվեստական հնարքներով առանձնացնող ժողովրդական լեզվով համեմված մի գոհար:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ:

1.Կարողանալ կատարել ընտրած հեքիաթների բովանդակության վերլուծություն:

2.Զարգացնել աշակերտների ստեղծագործական ունակությունները հեքիաթների ուսուցման ընթացքում:

3. Ներկայացնել հեքիաթի ուսումնասիրման ընթացքում աշակերտների ձեռքբերումները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ:

Աշխատանքի նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

1. Երեխայի մտածողության, խոսքի և հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացի առանձնահատկությունների ուսումնասիրություն,
2. Երեխայի զարգացման գործում հեքիաթի դաստիարակչական նշանակության վեր հանում:
3. Ներկայացնել խաղային տեխնոլոգիաների միջոցովհեքիաթների ուսուցումը դպրոցում, կիրառել անհրաժեշտ մեթոդները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ: Աշխատանքը կատարել եմ համադրական և վերլուծական մեթոդների օգնությամբ ուսումնասիրության ենթարկելով երեխայի կրթադաստիարակչական զարգացման ողջ ընթացքը՝ վեր հանելով այդ գործընթացում հեքիաթների ունեցած դաստիարակչականնշանակությունը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Աշխատանքում փորձ է կատարվել տեսականորեն առաջադրել հեքիաթների գործնական կիրառելիությանը նպաստող մի շարք տեսակետներ, կատարել ընդհանրացումներ:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Արվեստի յուրաքանչյուր գործ և նրա հեղինակի անհատականությունը արժևորվում են ստեղծագործության թեմատիկայով, արտահայտման միջոցների ընտրությամբ և այլն: Գեղարվեստական երկի, այս դեպքում հեքիաթի միջոցով գրականության մեջ դրսևորվում է այս կամ այն ժողովրդի ազգային կերպարը, նրա կենսագրությունը, մտածողության ձևը: Իսկ ահա հեքիաթների դերը մանուկների դաստիարակության գործում ինչպես միշտ, նույնպես և այսօր, արդիական է:

ԳԼՈՒԽ 1. ԵՐԵԽԱՅԻ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ, ԽՈՍՔԻ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Դաստիարակության դերը երեխայի անձի ձևավորման և զարգացման գործում:

Մանկավարժությունը սերունդների, դաստիարակության և զարգացման հիմնախնդիրներով զբաղվող գիտություն է: Այլ խոսքով՝ այն գիտություն է, որը հետազոտում է սերունդների կրթության, դաստիարակության և զարգացման օրինաչափությունները: Իսկ ահա բուն դաստիարակությունը լայն ընդգրկում ունեցող հասարակական երևույթ:Նրա էության բացահայտումը մարդաբանական և հասարակական երևույթներն ուսումնասիրող գիտությունների ընդհանուր խնդիրն է: Մանկավարժական և հոգեբանական բնութագրումներով դաստիարակությունը գործունեություն է՝ մարդու մեջ որոշակի դիրքորոշումներ ձևավորելու նպատակով: Դաստիարակության հիմնական նպատակը նոր ծնված երեխայի անձի ձևավորումն ու նրա հետագա զարգացումն է: Դաստիարակությունից է կախված երեխայի ընկալումը շրջապատող իրականության հանդեպ, նրա հարաբերությունները իր և շրջապատող մարդկանց հետ:

Երեխաների դաստիարակությունը բարդ, պատասխանատու, բայց հետաքրքիր զբաղմունք է: Եվ նրա նշանակությունը չի կարելի չգնահատել, չի կարելի ինքնահոսի թողնել, կամ ամբողջովին վստահել մանկապարտեզին ու դպրոցին: Դեռևս նախնադարյան հասարակության մեջ տոհմը, մարդկային հանրությունը երեխաների դաստիարակությունը հանձնարարում էին առավել խելացի, փորձառու, ուժեղ մարդկանց, որոնք արդեն հատուկ կերպով, հատուկ պայմաններում, քիչ թե շատ հետևողականորեն կազակերպում էին տվյալ հանրության երեխաների, աճող սերնդի զարգացումն ու ձևավորումը: Դաստիարակությունը նպատակաուղղված ներգործություն է երեխաների ու երիտասարդության գիտակցության ու վարքի, նրանց աշխարհայացքի, արարքների, սովորույթների վրա: Հենց դաստիարակությամբ էլ նշանակալի չափով պայմանավորվում են այն փոփոխությունները, որ կրում է մարդը ծնվելու պահից մինչև հասուն դառնալը:

1. Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, *«Մանկավարժ», 2005,* էջ *9*
2. Գ. Ե. Ղույումչյան, Մանկավարժություն, Գիրք *II,* Երևան, *2005,* էջ *10*
3. Տե՛ս Սերգեյ Արզումանյան, Էլդա Գրին, Իրավաբանական հոգեբանություն, Երևան, *2004,* էջ *130*

ԵՐԵԽԱՅԻ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ, ԽՈՍՔԻ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՁԵԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մանկության շրջանում յուրաքանչյուր երեխայի ամենակարևոր ձեռքբերումներից մեկը մայրենի լեզվին տիրապետելն է: Լեզուն միջոց է, որի օգնությամբ մարդիկ հաղորդակցվում են միմյանց հետ, փոխանակում մտքեր և հասնում փոխադարձ ըմբռնման:

Երեխայի խոսքի զարգացման մեթոդը ներառում է ոչ միայն երեխայի ուսուցումը իր սեփական մտքերի տրամաբանական ներկայացման մեջ, այլև իր բառապաշարի համալրումը, իսկ խոսքի զարգացման հիմնական միջոցներն են հեքիաթները, ուսումնական և դերային խաղերը:

Յուրաքանչյուր երեխա մայրենի լեզվի բանավոր խոսքին տիրապետում է կյանքի առաջին մի քանի տարիներին: Իսկ ահա խոսքի զարգացման ընթացքում շրջապատի հետ շփման, հաղորդակցության արդյունքում ձևավորվում են երեխայի խոսքային հաղորդակցական ունակությունները, զարգանում է նրա բանավոր խոսքը: Իսկ ձեռք բերած փորձն ու հմտությունը, մտածողությունը, ներքին զգացողությունները խմբում լուսավոր, ստեղծագործական, զվարճալի, հրճվալի միջավայր են դառնում:

Հարկ է նշել, որ խոսքի զարգացման հիմնական խնդիրներն են խոսքի հնչյունային ընկալման դաստիարակումը, բառապաշարի ձևավորումը, խոսքի քերականական կառուցվածքի յուրացումը, կապակցված խոսքի զարգացումը և ծանոթացումը գեղարվեստական գրականությանը:

Երեխայի խոսքի զարգացումը հոգեկան բարձր իմացական գործընթաց է և սերտորեն կապված է մտածողության հետ: Խոսքն ունի զարգացման իր փուլերը,
որոնք ընթանում են երեխայի տարիքային առանձնահատկություններին համապատասխան: Շատ կարևոր է զարգացնող խոսքային միջավայրի առկայությունը, որը կոչված է բավարարելու երեխաների պահանջը առարկաների, երևույթների և իրադարձությունների մասին ստացված տեղեկությունների վերաբերյալ դուրս գալով իրենց համար սովորական դարձած միջավայրի սահմաններից, և որի համար անհրաժեշտ է նպաստել երեխայի հետաքրքրության ձևավորմանը խոսքի զարգացման անկյունում տեղադրելով հետաքրքիր նյութեր, իրեր, գրքեր, որոնք կխթանեն երեխայի խոսքային գործունեությունը: Նաև պետք է լսել երեխային, ճշտել պատասխանները, հուշել

որոշակի բառերը և օգնել տրամաբանորեն ու հասկանալի կառուցելու խոսքը:

Անհրաժեշտ է օգնել երեխային՝ բարյացակամորեն շփվելու հասակակիցների հետ, արտահայտելու վերաբերմունքը:

Ինչ վերաբերում է խոսքի զարգացման մեթոդական սկզբունքներին, ապա նշենք, որ երեխայի խոսքի ձևավորման գործընթացը կառուցվում է ոչ միայն ընդհանուր դիդակտիկական, այլև որոշակի մեթոդական սկզբունքների հիման վրա, որոնցով ղեկավարվելիս դաստիարակն ընտրում է համապատասխան մեթոդները, հնարքներն ու միջոցները: Իսկ այդ սկզբունքներն էլ ելնում են երեխայի լեզվի և խոսքի յուրացման օրինաչափություններից և արտացոլում են մայրենի լեզվի ուսուցման առանձնահատկությունները

Չպետք է մոռանալ, որ յուրաքանչյուր երեխայի խոսքը զարգանում է նրա ամենօրյա հաղորդակցման ընթացքում, այլ կերպ ասած՝ երեխայի համար խոսելու, հաղորդակցվելու բնական և իրական դրդապատճառները պետք է լինեն շփվելու, իմանալու, տպավորությունները կիսելու, իր այս կամ այն կարիքը հոգալու բնական պահանջմունքներները, ուստի երեխայի հետ շփումը, ինչպես նաև պարապմունքները պետք է կառուցվեն բնական հաղորդակցման վրա, քանի որ բնական հաղորդակցման ընթացքում հաշվի է առնվում երեխայի ցանկությունը, հետաքրքրությունները, ինչը խոսքային գործունեության բնական դրդապատճառներ է ծնում և բարձրացնում արդյունավետությունը:

Իսկ ահա դաստիարակի խնդիրն է ստեղծել այնպիսի իրավիճակներ, որ երեխան հաղորդակցվելու պահանջ ունենա և ուսուցման յուրաքանչյուր գործողություն պարունակի դրական մոտիվ:

Երեխայի խոսքի զարգացումը կարող է լինել մի քանի մակարդակներում: Առաջինը կառուցվածքայինն է, որը ենթադրում է լեզվի համակարգի տարբեր մակարդակների ձևավորում՝ հնչյունաբանական (հնչյունների ճիշտ արտաբերում), քերականական (քերականորեն խոսքի ճիշտ կառուցում):

Մյուսը ֆունկցիոնալ մակարդակն է, որը ենթադրում է հաղորդակցական խոսքի զարգացում, կապակցված խոսքի ձևավորում, այսինքն՝ մենախոսական կարողությունների (երբ երեխան ինչ-որ բան է պատմում) և երկխոսական կարողությունների զարգացում:

Հաջորդ մակարդակը ճանաչողական կամ կոգնիտիվն է, երբ լեզուն և խոսքը ծառայում են իմացությանն ու ճանաչողությանը, այսինքն՝ գիտելիքներ ձեռք բերելուն:

Լեզվի հիմնական միավորներն են հնչյունը, վանկը, բառը, բառակապակցություն, նախադասություն, տեքստ: Ըստ այդմ էլ, երեխայի խոսքի զարգացման խնդիրները կարող են լինել խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակումը, բառապաշարի զարգացումը, խոսքի քերականական կողմի, այսինքն՝ քերականական կառուցվածքի ընկալման ձևավորումը, կապակցված խոսքի զարգացումը (մենախոսություն և երխոսություն), խոսքի և լեզվի տարրական երևույթների գիտակցման ձևավորումը, գեղարվեստական գրականության հետ ծանոթացումը:

Այս կետերից առավել մանրամասն կանդրադառնանք վերջինին, քանի որ խոսքի զարգացման խնդիրների մեջ իր առանձնահատուկ տեղն ունի գեղարվեստական խոսքի հետ երեխայի ծանոթացումը: Այստեղ խոսքը նախ և առաջ հեքիաթների մասին է: Այն մեծ նշանակություն ունի երեխայի անձի ձևավորման համար, որպես երեխայի խոսքի հարստացման սկզբնաղբյուր: Գեղարվեստական գրականությունը հարստացնում է բառապաշարը, զարգացնում պատկերային խոսքը, գեղագիտական ճաշակը և նպաստում բարոյական հասկացությունների ձևավորմանը:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ, ԽՈՍՔԻ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ի՞նչ է հեքիաթը. Հեքիաթը երեխաների համար գոյություն ունեցող միակ իրականությունն է: Հեքիաթն ունի աշխարհաճանաչողական նշանակություն: Երեխաների համար դժվար է ընկալել իրականությունը, ուստի այն նրանց մատուցվում է հեքիաթի միջոցով:Հեքիաթը ժողովրդական բանահյուսության տեսակներից մեկն է,որը սկզբում եղել է բանավոր,այնուհետև մշակվել և գրավոր ներկայացվել մարդկությանը:Հեքիաթը մարդու մոտ մշակում է զգացողություն,ճաշակ,տանում է դեպի բարու հաղթանակը չարի նկատմամբ:Այն ինչ կյանքում անհնար է եղել տեսնել ,մարդիկ ցանկացել են տեսնել հեքիաթներում: Նրանք իրենց շրջապատին ծանոթանում են հեքիաթների միջոցով: Հեքիաթով է սկսվում երեխայի ծանոթությունը արտաքին աշխարհի հետ: Ցանկացած հեքիաթ պատմություն է մարդկանց փոխհարաբերությունների, մեր կյանքում գործող օրենքների մասին: Միաժամանակ այդ բոլորը ներկայացվում են երեխայի համար հասկանալի լեզվով: Հեքիաթի շնորհիվ զարգանում է երեխայի երևակայությունը և ստեղծագործելու ունակությունը: Լավ հեքիաթը կյանքի ծնունդ է՝ խաղ, արկած, հրաշք, ճակատագիր… հեքիաթի թեմաները անվերջ են: Երեխան ակամա այնտեղ գտնում է իր կյանքին համապատասխան իրավիճակներ, փորձում է իրեն նույնացնել համարձակ և քաջարի հերոսների հետ:

Մեծահասակները, ցանկանալով երեխայի հետ խոսել իրենց դժվարությունների մասին կամ ինչ-որ բան հուշել, դժվարանում են համապատասխան բառեր գտնել, վախենում են, որ երեխան ճիշտ չի հասկանա իրենց: Այդ իրավիճակից ելքն այն է, որ մեծահասակը երեխայի հետ ընկղմվի երևակայության և կախարդանքի աշխարհը, իսկ գործնական ամենալավ օգնականը հեքիաթային պատմություններն են:,, Այն ամենը,ինչին նայում ես,կարող է հեքիաթ դառնալ և դու կարող ես պատմություն կերտել այն ամենից,ինչին դիպչում ես,,:/ Հանս Քրիստիան Անդերսեն/:

Հարյուրամյակներ շարունակ մարդիկ ունեցել են շատ բարձր բարոյական և հոգևոր զարգացածության հասած առաջնորդներ, որոնք իրենց գիտակցությամբ անհամեմատ ավելի առաջ են եղել ժամանակակիցներից, նրանք իրենց առաքելությունն են համարել ուղղորդել և սատարել մարդկանց:

Ուստի, հաշվի առնելով տեղային և ժամանակաշրջանին բնորոշ առանձնահատկությունները, նրանք ընտրել են տարբեր միջոցներ: Իմաստությունը մարդկանց փոխանցելու ձևերից մեկն էլ եղել է այն, ինչը հետագայում կոչվեց ազգային ավանդություն: Այսպիսով ժողովրդական հեքիաթները, առակներն ու լեգենդները մարդկային էության շատ ավելի խորը իմացություն և հավերժական իմաստություն են կրում իրենց մեջ:

Հեքիաթի դաստիարակչական նշանակությունը երեխայի զարգացման գործում

Յուրաքանչյուր հեքիաթ ունի դաստիարակչական հզոր արժեք և բարոյական կարևոր սկզբունքներ, որոնք ոչ թե ներկայացվում են իբրև քարոզ, այլ արտահայտվում են հերոսների արարքների, խոսքերի միջոցով: Աննկարագրելիորեն մեծ է երեխայի հոգու, զգացմունքների և համոզմունքների վրա հեքիաթի թողած ազդեցությունը: Ինչպես հանրաճանաչ իտալացի գրող Ջանի Ռոդարին է նշում, հեքիաթը երեխային պետք է կողմնորոշվելու, իրեն ուսումնասիրելու, իր հնարավորությունները չափելու, գնահատելու համար4: Հեքիաթը միաժամանակ տեղծագործական ունակությունների, բանավոր կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոց է:

Անսահման մեծ է հեքիաթների ինչպես դաստիարակչական, այնպես էլ պատմաճանաչողական և գրական-գեղարվեստական արժեքն ու նշանակությունը: Հեքիաթները ժողովրդի համար միայն ժամանցի առարկա չեն եղել, որոնցով կարելի էր կարճել ձմռան երկար ու ձանձրալի գիշերները, փարատել ցերեկվա ծանր առօրյայի ճնշիչ տպավորությունը: Հեքիաթները կատարել են հասարակական լայն զանգվածների լավագույն ձգտումների ու իղձերի յուրահատուկ հաղորդիչի դերը, ամրապնդել են նրանց նվիրական ավանդները իրար հաջորդող սերունդների գիտակցության մեջ: Հեքիաթների միջոցով ժողովուրդը դրսևորել է այն ոգևորումները, որոնք մղել է ինքը բնության տարերային ուժերի հաղթահարման համար, արտահայտել իր մտորումները, որոնել է իր կրած տառապանքների պատճառները, պայքարի կոչ է արել ամեն տիպի բռնության, ճնշման, անարդարության ու շահագործման դեմ: ,,Եթե կարող ես երազել այդ մասին,ուրեմն կարող ես և անել այդ,,:/Ուոլթ Դիսնեյ/

Մարդիկ դարեր շարունակ ոգևորվել են հեքիաթների հերոսներիխիզախության, անվեհերության, խելքի ու հնարամտության հիանալի օրինակներով, դժվարությունները հաղթահարելու մեծ կամքով, չքավորներին ու ընկածներին զորավիգ կանգնելու ազնիվ ձգտումով, արդարությունը պաշտպանելու և ճշմարտությանը հասնելու անձնազոհ պատրաստակամությամբ, ջանադիր աշխատասիրությամբ, հավատարմությամբ և անձնազոհությամբ: Ժողովրդական բանահյուսության մյուս ժանրերի հետ միասին, հեքիաթները հարուստ նյութ են տալիս ժողովրդի հոգեբանությունը, նրա իղձերն ու ակնկալությունները, նրա բուն պատմությունը ուսումնասիրելու համար: Հեքիաթների լավագույն նմուշները այսօր էլ չեն կորցրել իրենց հմայքն ու ուժը և գեղարվեստական մեծ բավականություն են պատճառում մարդկանց: Նրանք ունեն յուրահատուկ նշանակություն այնքանով, որքանով որ բանաստեղծական բարձր ձևերի մեջ կերպավորում են ժողովրդի դարավոր մտքերն ու զգացմունքները, մարդկության անկրկնելի մանկությունը:

Այսպիսով, հեքիաթը յուրաքանչյուր փոքրիկի լիարժեք զարգացման ամենամատչելի տարբերակներից մեկն է: Այդպես եղել է, կա ու կլինի: Պետք չէ թերագնահատել հեքիաթի դերը երեխայի կյանքում: Ճիշտ ընտրած հեքիաթը դրական ազդեցություն կթողնի երեխայի հուզական ներաշխարհի վրա, կուղղի և կլավացնի նրա պահվածքը, ինչպես նաև կզարգացնի սեփական անձի և ուժերի նկատմամբ հավատը: Հեքիաթի հրաշք աշխարհը գրավում է երեխաներին և այն,ինչոր նրանք չեն կարող տեսնել իրականության մեջ,տեսնում են այդ գեղեցիկ աշխարհում:Հեքիաթներն ունեն կրթիչ և դաստիարակիչ ուժ:

Երեխայի համար հեքիաթների կարեւորության, նշանակության մասին կարելիէ խոսել անվերջ: Միանշանակորեն համակարծիք ենք որոշ հետազոտողների վերջնական եզրակացություններին՝ հրաշապատում հեքիաթների դերը երեխաների զարգացման եւ առողջ հոգեկերտվածք ձեւավորելու համար անգնահատելի եւ անփոխարինելի են: Ի վերջո, «երեխան, որը մեծացել է հեքիաթներ ու լեգենդներ ունկնդրելով, նկատելիորեն ավելի առողջ է, խելացի, քաջ և կրեատիվ»:

4. Տե՛ս Ջ. Ռոդարի, Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան, *1995,* էջ *154:*

ՀԵՔԻԱԹԻ, ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԻ, ԿԻՐԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Յուրաքանչյուր հեքիաթ երեխաներին մատչելի լեզվով նրանց կյանք է սովորեցնում, պատմում չարի ու բարու մասին:

Հեքիաթների՝ երեխաների զարգացման գործում կիրառման նպատակները բազմազան են. սկսած երևակայությունը զարգացնելուց մինչև ճիշտ խոսքի ձևավորում: Հեքիաթը երեխաներին մատչելի լեզվով նրանց կյանք է սովորեցնում, պատմում չարի ու բարու մասին: Երեխաներն ավելի հեշտ են ընկալում հեքիաթը, քան թե մեծահասակների դաստիարակչական քարոզները: Ուսումնասիրությունները ցույց են տվել. երեխաները, որոնց փոքր հասակից սկսած հեքիաթներ են պատմել, ավելի շուտ են սովորում իրենց մտքերը ճիշտ արտահայտել:

Հեքիաթների հիմնական նպատակն է զարգացնել երեխայի երևակայությունը և ստեղծագործական պոտենցիալը: Մանկական հեքիաթները ընդլայնում են երեխայի բառապաշարը, օգնում են ճիշտ և տրամաբանական խոսք կազմել: Կարևոր է նաև այն, որ հեքիաթները երեխայի խոսքը դարձնում են ավելի էմոցիոնալ և պատկերավոր: Ձևավորվում է հարցերը ճիշտ ձևակերպելու ունակություն:

Երեխաներն ընդհանրապես իրականությունը պատկերավոր են ընկալում, իսկ հեքիաթները հենց նպաստում են իրականության ճիշտ ընկալմանը: Երեխաները հեքիաթների միջոցով պատկերավոր են ընկալում նաև չարն ու բարին: Հեքիաթներում միշտ հաղթում է բարին, ինչը երեխային կօգնի հաղթահարել կյանքի դժվարությունները՝ ենթագիտակցությունում ունենալով բարու հաղթանակի գաղափարը: Նույն հեքիաթը երեխային կարելի է մի քանի անգամ պատմել, որպեսզի նաև լավ ընկալի հեքիաթի բուն ասելիքը:

Այսպիսով, հեքիաթների միջոցով կարելի է երեխայի մեջ շատ բնավորության, գործելակերպի դրական հատկանիշներ դաստիարակել: Այնտեղ կա բարի և չար ուժերի պայքար, և մշտապես հաղթում է բարին: Կարևորվում է բարությունը, մարդկանց օգնելու պատրաստակամությունը, սերը, կարեկցանքը: Հեքիաթների հրաշք աշխարհը գրավում է երեխաներին և այն, ինչ որ նրանք չեն կարող տեսնել իրականության մեջ, տեսնում են այդ գեղեցիկ աշխարհում: Հեքիաթներն ունեն կրթիչև դաստիարակիչ ուժ, ուստի հեքիաթը թույլ է տալիս դաստիարակել՝ դրականի վրա հենվելով:

Ինչ վերաբերում է հեքիաթների ուսուցման մեթոդներին, ապա դրանցից կարելի է առանձնացնել ու մատնանշել ուղղորդվող (կամ ընդհատումներով) ընթերցանության մեթոդը, որը հնարավորություն է տալիս երեխաների մեջ հետաքրքրություն արթնացնել ընթերցանության բուն գործընթացի նկատմամբ:

Ուղղորդվող ընթերցանության մեթոդի հիմքում ընկած է ընթերցանության գործընթացի դիտարկումը: Ի վերջո, ինչպե՞ս են կարդում հմուտ, ընթերցողական կուլտուրային տիրապետող մարդիկ: Կարդում են տեքստի մի հատված, դադար են տալիս՝ մտքում ծանրութեթև անելու,իրենք իրենց հարցեր տալու, պատասխաններ որոնելու,շարունակության մասին կանխատեսումներ անելու նպատակով:

Հեքիաթների սյուժեն ունի մի հիմնական գիծ՝ չարի և բարու պայքար, որի արդյունքում միշտ հաղթում է բարին: Այս ամենը, կարելի է ասել, ձևավորում է երեխաների արժեհամակարգը: Պետք է միշտ հիշել, որ երեխաները ունեն շատ նուրբ հոգի և զգացմունքներ, նրանց համար դժվար է հասկանալ ու ընդունել իրականությունը9: Նաև անհրաժեշտ է գիտենալ, որ երեխաների համար պետք է հեքիաթներ կարդալ այն տարիքից, երբ նրանք հասկանում են խոսքը: Դա արդեն 2-3 տարեկան երեխաներն են:

6. https://impoqrik.am/13%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6/%D4%B6%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D6%
7. http://dpir.mskh.am/hy/node/430
8. http://www.mynews.am/hy/story/3387

ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Գեղարվեստական հեքիաթներ-Ժողովրդական հեքիաթները կազմվել են դարերի ընթացքում, պահպանել բարոյա-էսթետիկ սկզբունքները, մարդկանց միջև ունեցած փոխհարաբերությունները, այդ իսկ պատճառով էլ միշտ կիրառվել են մանկավարժական նպատակներով: Ժողովրդի ծոցից ելած տաղանդավոր հեքիաթասացները ,պատմելով և սերնդից սերունդ փոխանցելով,հղկել ու կատարելագործել են հեքիաթները և որպես թանկագին ավանդ հասցրել մեզ:Հայկական հեքիաթների հավաքման ու հրապարակման աշխատանքին մեծապես նպաստել են Գարեգին Սրվանձտյանցը,Տիգրան Նավասարդյանը,Սարգիս Հայկանին,Երվանդ Լալայանը և ուրիշները:

Դիդակտիկ հեքիաթներ- Ուսուցողական հեքիաթները երեխաներին պատմում են նոր հասկացությունների մասին, հիմք են հանդիսանում նոր գիտելիքների ձեռք բերման համար: Այս հեքիաթներում շնչավորվում են թվերը, տառերը, առարկաները և այլն:

Դիագնոստիկ հեքիաթներ- Մենք հավանաբար գիտեք ինչ հեքիաթներ են դուր գալիս Ձեր երեխային: Դա նշանակում է, որ նա ենթագիտակցաբար արդեն ընտրել է հեքիաթի իր սիրելի հերոսին և փորձում է նմանակել նրան: Փորձեք հեքիաթ հորինել Ձեր երեխայի հետ միասին, և Դուք կբացահայտեք նրա գաղտնի մտքերն ու ցանկությունները:

Պրոֆիլակտիկ հեքիաթներ- Հեքիաթներ լսելու ընթացքում երեխաներն ակամայից գիտելիքներ են կուտակում իրենց և շրջակա միջավայրի մասին, ձևավորվում է երեխայի անձը, դրվում է նրա հետագա կյանքի հիմքը:

Բուժիչ-հոգեբանական հեքիաթներ-Հեքիաթ լսելով երեխան իրեն նույնականացնում է իր կյանքի իրավիճակը հիշեցող հերոսի հետ, վերապրում է նրա տխրությունն ու ուրախությունը: Նրա հետ միասին հայտնվում է խնդիրների մեջ և դրանցից ելքեր փնտրում: Դրա շնորհիվ իրական կյանքում նա սկսում է իրեն զգալ ավելի պաշտպանված և ինքնավստահ՝ օգտագործելով դրական հերոսի կիրառած հնարքները իր խնդիրները կարգավորելու հարցում:

Մեդիտատիվ հեքիաթներ- Մեդիտատիվ հեքիաթներն ուղղված են որոշակի դրական հուզական վիճակի առաջացմանը: Դրանք երեխային օգնում են ազատվել լարվածությունից, հոգնածությունից և գրգռվածությունից:

Հեքիաթներ կենդանիների մասին- Երեխաներին ավելի մոտ և հասկանալի են կենդանիների մասին հեքիաթները: Այդ տարիքում երեխաները հաճախ իդենտիֆիկացնում են իրենց կենդանիների հետ, հեշտությամբ կերպարանափոխվում են, կրկնօրինակում կենդանու վարքը: Այդ պատճառով կենդանիների մասին հեքիաթները ավելի լավ կարող են օգնել փոքրիկներին՝ կյանքի փորձը փոխանցելու համար:

Կախարդական հեքիաթներ սկսած հինգ տարեկանից երեխան իրեն իդենտիֆիկացնում է մարդկային կերպարների՝ արքայազների, թագուհիների, հրաշագործների, զինվորների և այլոց հետ: Նա սկսում է ընդօրինակել վարքային տարբեր մոդելներ:

Սարսափ հեքիաթներ- Հեքիաթներ՝ չար ուժերի, կախարդների, գերբնական ուժերի մասին: Որպես կանոն, վեց տարեկանից սկսած երեխաները սկսում են միմյանց պատմել հեքիաթ-սարսափներ: Հեքիաթ-սարսափների և չար ոգու մասին պատմությունների միջոցով երեխաները մասամբ վերապրում են իրենց վախերը: Կենցաղային հեքիաթներ անփոխարինելի դեր են խաղում ընտանեկան խորհրդատվության և այն դեռահասների հետ աշխատանքում, որոնք խնդիրներ ունեն ընտանեկան փոխհարաբերություններում:

Դիդարկտիկ հեքիաթներ- Դիդարկտիկ հեքիաթները կարող են բացահայտել որոշակի գիտելիքների կարևորությունը և իմաստը: Դիդարկտիկ հեքիաթների ձևով կարելի է ներկայացնել ուսումնական առաջադրանքները:

Հոգեշտկողական հեքիաթներ- Այսպիսի հեքիաթները ստեղծվում են երեխայի վարքի վրա նրբորեն ներգործելու համար: Շտկման տակ այստեղ պետք է հասկանալ երեխայի անարդյունավետ վարքի ձևի փոխարինումը առավել արդյունավետ ձևով:

Հոգեթերապևտիկ հեքիաթներ- Դրանք այն հեքիաթներն են, որոնք թափանցում են հոգու խորքը, բժշկում հոգին և բացահայտում տեղի ունեցող իրադարձությունների խորիմաստությունը: Այսպիսի հեքիաթները ոչ միշտ են միանշանակ և միշտ չէ, որ երջանիկ ավարտ են ունենում, բայց բավականին խորաթափանց են և նպաստում են անձի աճին:

Բոլոր հեքիաթներում գրողներն օգտվել են հեքիաթների անսպառ գանձարանից:Հեքիաթի ժանրի զարգացման ասպարեզում մեծ ծառայություն են մատուցել Հովհաննես Թումանյանը,Ղազարոս Աղայանը,Աթաբեկ Խնկոյանը Դերենիկ Դեմիրճյանը և ուրիշները: Լավ հեքիաթը կյանքի ծնունդ է խաղ,արկած,ճակատագիր:Հեքիաթներում եղած իրականի ու անիրականի սահմանազծումն ու տարբերակումը զգալի

դարձնելու համար հաճախ կարելի է նաև համապատասխան օրինակներ բերել ինքնուրույն ընթերցանության միջոցով աշակերտների կարդացած կամ նախորդ դասարաններում անցած հեքիաթներից:

Երրորդ դասարանում իրականացրել եմ նախագծային աշխատանք <<Լինում է չի լինում՝ մի հեքիաթ է լինում>> թեմատիկ խմբի շրջանակներում:

Աշակերտները բաժանվել են երեք խմբի. Բաժանումը կատարվել էր գունավոր թերթիկների միջոցով, որտեղ գրված էր խմբերի անվանումները.

1.Նկարազարդողների խումբ

2.Վերլուծաբանների խումբ

3.Փորձագետների խումբ

Աշակերտները մեծ ոգևորությամբ սկսեցին աշխատել: Նույնիսկ ծնողներն էին ոգևորվել և մեծ եռանդով աջակցում էին երեխաներին: Աշխատանքի կատարման համար տրվել էր որոշակի ժամանակահատված: Իրականում կար իրար օգնելու, համագործակցելու մեծ ցանկություն:

Երբ եկավ աշխատանքը ներկայացնելու օրը,ես իսկապես հիացած էի նրանց կատարած աշխատանքներով: Խմբի ավագը ներկայացնում էր անվանումը, իսկ մյուսները մեկը մյուսին շարունակելով կատարում էին քննարկում, մեջբերումներ անում:

Ներկայացնում եմ աշխատանքներից մի քանիսը:

Նկարազարդողների խումբ՝



ՆԿԱՐԱՉԱՐԴՈՂՆԵՐԻ խմբում աշխատել են

1. Մուրադյան Արթուր
2. Ավետյան Նարեկ
3. Փիլթակյան Նարեկ
4. Սահակյան Էդգար
5. Զաքարյան Վարդան
6. Կարապետյան Վարդան
7. Բալյան Մերի
8. Ազիզյան Ռաֆայել



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գույների և նրանց երանգների առատությունը բնական միջավայրու և մարդու կյանքում,անհրաժեշտություն առաջացրեցին բացի լեզվից նաև լրացուցիչ գույներ: Նույն գույներըկարող են այլ իմաստ ունենալ տարբեր ժանրերի տեքստերում և ամենակարևորը ժողովրդական մշակույթում: Գույնը որը արտացոլում է. օրինակ՝ նարնջագույնը, դեղինը և կարմիրը ակտիվ են, ջերմ ուղղված վարքագիծ: Նրանք, որոնք լույսը կլանող են. օրինակ՝, կապույտը և մանուշակը պասիվ են, սառը: Կանաչը միավորում է երանց հատկությունները: Սպիտ. սպիտակը խորհրդանշում են բացառական, դրական և բոլոր հակադրությունները: Գույներն ունեն բազ խորհրդանշական իմաստ: Ակուամենայնիվ ցանկացած գույնի մասին ընդհանուր եզրակացությունները շատ դժվար են: Եթե վերցնենք Հ.Թումանյանի հեքիաթների գիրքը հրատարակված 1984թ.որը կա գրեթե բոլորիս տանը: Այնտեղ կտեսնենք, որ չարն ու բարին միանշանակ գույներ չունեն: Չեք կարող ասել, որ այնտեղ միանշանակ սև կամ գորշ գույներով է ներկայացված, կամ հակառակը: Ինչպես ասացինք սկզբում, այն միանշանակ գունազարդված է ըստ ազգային մշակույթի: Իսկ եթե վերցնենք նոր հրատարակությունները, ապա կտեսնենք, որ կան որոշ մշակույթային գույներ, նախշեր, բայց այնտեղ արդեն գերիշխում են նոր ու նոր երանգներ՝ ըստ մեր ժամանակաշրջանի: Մեր գրքում ներկայացված են 5 հեքիաթ որոնք նկարազարդել են տարբեր աշակերտներ: Մեզ թվում է դուք կտեսնեք, որ նրանց պատկերացումը գույների վերաբերյալ տարբեր են: Իհարկե կլինեն որոշ ընդհանրություններ: Այս ամենից մենք կարող ենք եզրադրել, որ հքիաթներում բառին ու չարը հատուկ գույներ չունեն, իսկ գույները և երանգները հեքիաթներում բազմազան են ինչպես մեզ շրջապատող բնությունը և կենցաղը:

2.Վերլուծաբանների խումբ



ԼԻՆՈՒՄ Է
ՉԻ ԼԻՆՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երբ ես շատ փոքր էի, տատիկս ինձ շատ ու շատ հեքիաթներ էր պատմում: Հիմա մենք քննարկելու ենք այդ հեքիաթներից մի քանիսը, կհասկանանք շարն ու բարին, կծանոթանենք Ջախորդ Փանոսի ճախորդությունների վրա, կճանապարհորդենք մութ ու լույս աշխարհներում, կհանդիպենք բարի փերիների, հուրի-փերիների և էլի շատ ու շատ հեքիաթային անհավատալի բաների և հեքիաթների հերոսների:

1

ՎԵՐՋԱԲԱՆ

Սովորաբար հեքիաթների վերջում նրկրեցիս նրանք իմաստ է ընկնում, իսկ ես նրանք խորհուրդ եմ ուզում տալ.

1. Կարդացեք հեքիաթներ, նրանք անգնահատելի հարստություն են:

2. Կարդացեք հին իմաստունների ստեղծած մեր տառերով, որոնց շունչն այսօր էլ է հոգիներ բուժում:

3. Մի՛ վախեցիր, նրանք այի՛ր, և այն քեզ թեներ կտա ճախրելու համար:

Իսկ մեզում է ցանկանալ, որ Դուք նույնպիսի հաճույք ստանաք հեքիաթներից , ինչպիսին ստացել եմ ես և իմ նման տասը բոլոր յուղերն ու կարդացողները: Հաճույք ստանաք ու նաև սովորեք, թե ինչպիսին պետք է լինի մարդը, որոնք են այն լավ հատկությունները, որ պետք են բոլոր մարդկանց՝ բոլոր ժամանակներում:

9

Գրքի վրա աշխատել են՝

Գլխավոր վերլուծաբան՝

Արամ՝

Վերլուծաբաններ՝

Պողոս, Անի, Անժելիկա, Սյուզի, Արմեն, Լուիզա, Էդգար

Խորհրդատու՝ Նարինե Թամրազյան

Մ.Մանուչյանի անվան N 48 հիմն. դպրոց:

Տպաքանակը՝ 9

Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ____ 1
2. ՀՐԵՂԵՆ ՀԱՎՔԸ ____ 2
3. ՋԱԽՈՐԴ ՓԱՆՈՍԻ ՀԵՔԻԱԹԸ ____ 4
4. ԱՐԵԳԸ ՄԵՎ ԱՇԽԱՐՀԲՈՒՄ ____ 5
5. ԿՌՆԱՏ ԱՂՋԻԿԸ ____ 6
6. ՆՈՒԲԱՐՆ ՈՒ ԱԲԳԱՐԸ ____ 7
7. ՎԵՐՋԱԲԱՆ ____ 9

3.Փորձագետների խումբ









ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հեքիաթները (գրական նյութը) որպես երեխայի մտածողության, խոսքի և հաղորդակցության զարգացման անփոխարինելի միջոց խորագրով աշխատանքի շրջանակներում ուսումնասիրության եմ ենթարկել երեխաների մտածողության, խոսքի և հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացի առանձնահատկություններն ու վեր հանել երեխայների զարգացման գործում հեքիաթի դաստիարակչական նշանակությանն առնչվող կետերը՝ այն եզրակացությանը հանգելով, որ խոսքի զարգացման խնդիրների մեջ իր առանձնահատուկ տեղն ունի գեղարվեստական խոսքի հետ երեխայի ծանոթացումը: Այստեղ խոսքը նախ և առաջ հեքիաթների մասին է:

Հեքիաթը մեծ նշանակություն ունի երեխաների անձի ձևավորման համար որպես երեխաների խոսքի հարստացման սկզբնաղբյուր: Գեղարվեստական գրականությունը հարստացնում է բառապաշարը, զարգացնում պատկերային խոսքը, գեղագիտական ճաշակը և նպաստում բարոյական հասկացությունների ձևավորմանը:

Իմ կողմից կատարված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հեքիաթների միջոցով կարելի է երեխաների մեջ բնավորության, գործելակերպի դրական հատկանիշներ դաստիարակել: Այնտեղ կա բարի և չար ուժերի պայքար, և մշտապես հաղթում է բարին: Կարևորվում է բարությունը, մարդկանց օգնելու պատրաստակամությունը, սերը, կարեկցանքը: Հեքիաթների հրաշք աշխարհը գրավում է երեխաներին և այն, ինչ որ նրանք չեն կարող տեսնել իրականության մեջ, տեսնում են այդ գեղեցիկ աշխարհում: Հեքիաթներն ունեն կրթիչ և դաստիարակիչ ուժ, ուստի հեքիաթը թույլ է տալիս դաստիարակել՝ դրականի վրա հենվելով:

Այսպիսով, հեքիաթների հիմնական նպատակն է զարգացնել երեխաների երևակայությունը և ստեղծագործական պոտենցիալը: Մանկական հեքիաթները ընդլայնում են երեխաների բառապաշարը, օգնում են ճիշտ և տրամաբանական խոսք կազմել: Կարևոր է նաև այն, որ հեքիաթները երեխաների խոսքը դարձնում են ավելի էմոցիոնալ և պատկերավոր: Ուստի անհրաժեշտ է հեքիաթների տարբեր տեսակների առկայությունից ընտրելով համապատասխանը՝ նպաստել երեխաների աշխարհաճանաչողական, երևակայական, ստեղծագործական և խոսակցական մակարդակների իրացմանը համապատասխան մեթոդների կիրառմամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արզումանյան Ս., Էլդա Գրին, Իրավաբանական հոգեբանություն,Երևան, 2004
2. Ամիրջանյան Յու. Ա., Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, «Մանկավարժ», 2005
3. Ղույումչյան Գ. Ե., Մանկավարժություն, Գիրք II, Երևան, 2005
4. Ռոդարի Ջ., Ստեղծագործական երևակայության քերականություն,Երևան, 1995
5. http://www.hayary.org
6. http://blog.armparents.com
7. https://impoqrik.am
8. http://dpir.mskh.am
9. http://www.mynews.am
10. Հայկական ժողովրդական հեքիաթներ
11. Աշխարհի ժողովուրդների հեքիաթներ